

Լրատու

Թիւ 14 (Բացառիկ)
Դեկտեմբեր 2009

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի



Սիրելի հայրենակիցներ,

Ներկայացուցիչի պաշտօնին ընտրութելու առաջին իսկ օրեն, ինչպես խոստացած էի նախընտրական շրջանին, պարտք համարեցի Կիպրահայութիւնը տեղեակ պահել գաղութը յուզող բոլոր հարցերուն առնչութեամբ, աշխատելով թափանցիկ ու յստակ սկզբունքներով:

Այս առաջադրանքին ծառայելու նպատակով, ծնունդ առաւ «Լրատու»ի կանոնաւոր ու հերթական հրատարակումը: Երեսփոխանական Գրասենեակի հսկայական ու բազմակողմանի աշխատանքներուն կողքին, կու գար աւելանալու բժախնդրութեամբ եւ ամփոփ ձեւով պարաստելու այս գրքոյեկին ծանր բեռք, որ ընդհանրապես կ'ընդգրկէ պատգամս ուղղուած Կիպրահայութեան ու մեր հայրենակիցներուն, հակիրճ ձեւով կը ներկայացն իմ ու գրասենեակիս կողմէ կատարուած եռամսեայ գործունեութիւնը, ինչպես նաեւ գաղութը տեղեակ կը պահէ

Կիպրոսի Հանրապետութեան օրենքներուն եւ կամ նորութիւններուն կապակցութեամբ: Երեք անձիք սիրայօժար նուիրումով կ'իրագործեն «Լրատու»ի հեզասահ հրատարակութիւնը, ներառեալ գաղութիս կայքէջին մէջ լոյս տեսնող անգլերէն թարգմանութիւնը:

Այս տարին, ընդիանուր առմամբ կրնամ համարել հեզասահ գործունեութեամբ բեղուն տարի մը, բացի Նարեկ Վարժարաններու Տնօրենութեան եւ հոգաբարձական կազմի նշանակումներուն առիթով ստեղծուած անհաճոյ եղելութիւններէն: Ճակատաբաց կը յայտարարեմ, թէ անոնք բարուր լուծումի յանգեցան՝ ի նպաստ Կիպրահայութեան միակ հայեցի դաստիարակութիւն մատուցող կրթարանին:

Նարեկ Վարժարաններու հոգաբարձական նոր կազմի նշանակման տաղտկալի իրադարձութիւններուն ընթացքին, ամուր կառչած մնալով նախնական ներկայացուցած ցանկիս որդեգրման, անկողմնակալ սկզբունքներով առաջարկուած անձերու անունները գործս դիւրացուցին թեզս պաշտպանելու եւ փաստելու կառավարական բարձրաստիճան պաշտօնեաներուն, թէ խմբակի մը կողմէն փոխանցուած տեղեկութիւնները անհիմն եին, իսկ անուանացանկը կազմուած էր իրաքանչիւրին ունեցած արժեքներուն ու ասպարեզային փորձառութեան հիման վրայ: Չեզոքութեան կշիռը պահելով, կը քայ լուծել Նարեկ Վարժարաններու նոր հոգաբարձական մարմինին առիթով արձարծուած անհաճոյ եղելութիւնները: Խուսափելու համար կրկնութիւն կատարելէ, «Անհրաժեշտ Լուսաբանութիւն» խորագիրով 16.12.2009 թուակիր հաղորդագրութեամբ մը, մասնամասնութեամբ ծեզի փոխանցեցի այն ինչ որ կենսական կը նկատէի: Բաւարարուած եմ իրագործած արդիւնքովս, իսկ անոնք որոնք հետաքրքրուած են Նարեկ Վարժարաննե-

րու ապագայի վերելքով պիտի նշմարեն, թէ սկզբնական ցանկես կարգ մը իսկապէս առաւելութիւններ ունեցող անձերու հաշւոյն եղան փոխարինումները: Այդ անձերը շատ բան ունեին տալիք դպրոցին, կրթական մարզին մէջ իրենց ունեցած փորձառութեամբ եւ մասնագիտութեամբ:

Յու փակագիծ մը բանալով յստակացնեմ, թէ տարիներ առաջ, **եռեք անհատներ աւելցան անհաւասարակրշին հոգաբարձական կազմի մը վրայ, ուր անտեսուած եր գաղութին մէկ պատկառելի հատուածը, մինչ այս պարագային, փորձ կատարուեցաւ Պետական Ներկայացուցիչին ներկայացուցած հաւասարակշռուած ցանկեն դուրս ձգել տալ յստակ նշելով հինգ յատուկ անուններ, զանոնք փոխարինելով այլ հինգ անհատներով:** Յարցերը լաւ ըմբռնենք եւ նոյն սակարին մէջ չդնենք:

Յամենայնդեպս, վերջին իրադարձութիւններու արդիւնքը յանգեցաւ բարոր լուծումի, որ բան պիտի չփոխէ Նորանշանակ հոգաբարձական կազմին նապատակներէն ու ծրագրումներէն, քանի որ մեծամասնութեամբ որդեգրուեցան նախնական ցանկովս ներկայացուած անունները: Զեզի կը վստահեցնեմ, թէ 2009 թուականի նոր տևօրէնի նշանակումով ու նոր հոգաբարձութեամբ, Նարեկ Վարժարանները պիտի յարատենեն նոր հեռանկարով հասնելով բարձրագոյն մակարդակի:

Ծաբաթ, 31 Յոկտեմբերին, Նիկոսիոյ «Բալլաս» հանդիսասրահին ներս «Կոմիտաս» Զառեակի ելոյթը մեծ յաջողութեամբ պսակուեցաւ, թէ՛ որակի եւ թէ ներկաներու թիւի առումով: Յաջորդ Եշերուն մէջ լայնօրէն անդրադարձած ենք այս մասին:

Իսկ Չորեքշաբթի, 18 Նոյեմբեր 2009ին, Առաջնորդարանի «Ելթիւճեան» սրահին մէջ տեղի ունեցաւ դասախոսութիւն-զրոյց «Սոլութիւններու Կանխարգիլում»

Նիւթով: Բովանդակալից դասախոսութիւնը ու ներկաներու հարցումներով մասնակցութիւնը խիստ հետաքրքրական ու հաճելի դարձուցին ձեռնարկը: Մանրամասնութիւնները՝ «Լրատու»ի 10-րդ Եջով:

Եւրոպական Խորհուրդի Գլխաւոր Կառոյցի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան Խորհրդատու Մարմինի (Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities) պատվիրակութեան հետ հերթական հանդիպումս անհրաժեշտ ու բեղմնաւոր կը դառնայ տարուէ տարի: Վրծարծւած ու քննարկուած նիւթերու ամփոփ տեղեկագրութիւն պիտի տեսնեք «Լրատու»ի յաջորդ Եջերուն մէջ:

Մեր սիրելի հայրենակիցներուն անցագրային ու այլ հարցերը դիւրացնելու նպատակով, Փետրուար 5ին եւ 6ին Կիպրոս հրաւիրեցի ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանութեան հիւպատոս Տիկ. Լիանա Գրիգորեանը: Երեսփոխանական Գրասենեակը, լրիւ երկու օրերով դեսպանութեան տրամադրութեան տակ պիտի ըլլայ: Կը յանձնարարենք բոլոր Հայաստանցի քաղաքացիներուն, օգտուելու այս իւրայատուկ առիթեն: Ներփակ պիտի գտնեք յայտարարութիւն մը այս առևութեամբ:

Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի ուրախ առիթներով կը շնորհաւորեմ Ձեր բոլորին Ամանորը յուսալով, որ 2010 տարեշրջանին, բոլորս ձեռք ձեռքի տուած հաստատակամօրեն կը յառաջանանք դեպի փայլուն ապագայ:

**Վարդգես Մահտեսեան
Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

ԵՌԱՄՍԵՎՅ ԳՈՐԾՈՒԵՈՒԹԻՒՆ

Առ ի գիտութիւն մեր հայրենակիցներուն կը փոխանցենք, թէ Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքը (Aliens & Immigration Unit), 7 Դեկտեմբեր 2009Էն մինչեւ 7 Յունուար 2010ը փակ պիտի մնայ հանրութեան համար, գրասենեակի տեղափոխութեան պատճառով։ Յետեւաբար, մեր գրասենեակի աշխատանքները վերոնշեալ բաժանմունքին հետ ժամանակաւորապէս սառած են։

Հպատակութիւն

Վերջին երեք ամիսներուն ընթացքին, երեք անհատներ Կիպրական հպատակութիւն ստացան, որոնցմէ երկուքը՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան նախկին շրջանաւարտներնեւ։

Յիշեցնենք, թէ Վերջին մի քանի տարիներուն, քաղաքացիութեան դիմում Ներկայացուցած հարիւրի մօտ անհատներ, մեր գրասենեակը դիմած էին խնդրելով Պրև. Մահտեսեանի միջամտութիւնը։ Իւրաքանչիւր հարց լորջորէն սերտելէ ետք, 2006, 2007 եւ 2008 տարեշրջաններուն, Պետական Ներկայացուցիչը, առաջնահերթութեան կարգով, յաջորդական երեք անուանացանկեր պաշտօնապես փոխանցեց Ներքին Գործոց Նախարարութեան յատուկ ուշադրութեան։ Յաճախակի եւ լուրջ հետապնդումներով, շատ մը դժուար ու անելի դիմաց գտնուող անձերու հպատակութեան հարցերը բարւոք լուծումի յանգեցան, միաժամանակ յարգելով օրենքով սահմանուած պայմանները։ Այդ պայմանները ամբողջացնելու հիմնական կետերն են՝ տարեկան կեցութեան արտօնագիրի նորոգում՝ մինչեւ քաղաքացիութիւն ստա-

Նալը, անցագիրի ժամկետի ի օրու վաւերականութիւն, բժշկական ապահովագրութիւն եւ բաւարար Եկամուտ ուսենալու փաստ կամ գործի համաձայնագիր: Անշուշտ, աւելորդ է զսել, թէ վերոյիշեալ անհատները պետք է Կիպրոս բնակին միևնույն իրենց հարցի վերջնական լուծումը:

**Հանդիպում՝ Եւրոպական Խորհուրդի Գլխաւոր
Կառոյցի Ազգային Փոքրամասնութիւններու
Պահպանութեան Խորհրդատու Մարմինին հետ**

Երկուշաբթի, 12 Յուլիսեմբեր 2009ին, Պր. Սահմենան հանդիպում ուսեցաւ Եւրոպական Խորհուրդի Գլխաւոր Կառոյցի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան Խորհրդատու Մարմինի (Advisory Committee on the Framework Convention for the Protection of National Minorities) պատուիրակութեան հետ: Այս երրորդ հանդիպումն էր, որու ընթացքին Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը, փաստացի ապացույցներով, անոնց ուշադրութեան յանձնեց Կիպրահայ Երիտասարդութեան դիմագրաւած դժուարութիւնները կարգ մը ասպարեզներու եւ կառավարական գործերու մուտքի քննութեանց կապակցութեամբ, ուր Յունարենին Մայր լեզուին նման լաւ տիրապետած չըլլալը, լուրջ արգելք կը հանդիսանայ մրցելու եւ ապահովելու համապատասխան կառավարական պաշտօններ կամ գործի արտօնագիրներ: Ան շարունակեց ընդգծելով, «արդեօք մայրենի լեզուի ուսուցումը պետք է սահմանափակել՝ բարելաւելու Յունարեն լեզուի բարձր գիտութիւնը: Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակումը, Եկաւ աւելցնելու Նարեկ Հայկական Վարժարաններու պարտաւորութիւնը, լաւագոյնս ուսուցանելու Հայերեն լեզուն եւ պատմութիւնը»:

Գալով Մելգոնեան Կրթական Հաստատութեան ճակատագիրին, Պրո. Սահտեսեան անոնց փոխանցեց, թէ ինք կը շարունակէ կառավարական մակարդակի հանդիպումները եւ այս գծով պիտի ինդրեր Եւրոպական Խորհուրդի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան Խորհրդատու Մարմինի աջակցութիւնը:

Երրորդ գլխաւոր արծարծուած հարցը, կրօնական փոքրամասնութիւններու Պետական Ներկայացուցիչներու Սահմանադրութեամբ հաստատուած իրավիճակին կապակցութեամբ էր, որ առ այժմ Պետական Ներկայացուցիչը նախընտրեց չքննարկել, նկատի առնելով Կիպրուական հարցի բանակցութիւններու լուրջ հոլովոյթը, սակայն մատնանշեց կարեւորութիւնը, գոնեւ մեր գաղութին հետ առնչուող հարցերուն կապակցութեամբ ձայն ունենալ:

Անդրադարձ կատարուեցաւ նաեւ բանակի ծառայութեան հետ կապուած հարցերուն, որոնք մեծ մասամբ լուծուած կը համարուին, եւ Կիպրոսի Պետական Համալսարանին մեջ հայկական ամպիոնի մը հաստատման առաջարկին:

Պրո. Մահտեսեան տեսակցութեան աւարտին շնորհակալութիւն յայտնեց Խորհրդատու Մարմինին անոնց տարած շօշափելի աշխատանքին համար եւ եզրափակեց ընդգծելով, թէ զգալի յառաջդիմութիւն կայ կառավարութեան վերաբերմունքին մեջ, ինչ կը վերաբերի Կիպրոսի մեջ ապրող փոքրամասնութիւններուն կրթական, մշակութային եւ ընկերային մարզերէն ներս:

Յիշենք, թէ այս մարմինը հանդիպում ունեցաւ նաեւ Նարեկ Վարժարաններու տևորէնութեան եւ հայ մամուլի ներկայացուցիչներուն հետ:

«ԿՈՄԻՏԱՍ» Թառեակի անկրկնելի ելոյթ



Ծաբաթ, 31 Յունիսմբեր 2009ին, Երեսփոխանական Գրասենեակի կազմակերպութեամբ, Նիկոսիոյ «Բալլաս» թատերասրահին մէջ, մեծ յաջողութեամբ իրականացաւ հայրենի «Կոմիտաս» Թառեակի անսախընթաց ելոյթը, և նուիրուած Կոմիտաս Վարդապետի ծննդեան 140-ամեակին: Մօտ 425 հոգի հաջուող օտար իրաւիրեալներու եւ հայ հանդիսատեսներու ներկայութեան, աշխարհի ամենահին եւ գոյատեւող քառեակը, իր երրորդ սերունդի երաժիշտներու բացառիկ կատարողութեամբ, ելոյթ ունեցաւ նուագելով Կոմիտասի, Մոցարթի, Յինտըլի, Կարտելի եւ Փիածոլլայի հատընտիր ստեղծագործութիւնները: 17րդ եւ 18րդ դարու պատկանող «Կուարների» երաժշտական գործիքներու ընկերակցութեամբ ու արուեստագետի ամենաբարձր հմտութեամբ, անոնք

Ներգրաւեցին Ներկաներուն սրտերն ու հոգիները, արժանանալով շերմ ծափահարութեան: Քառեակը, քաջալերուած Ներկաներուն անվերջանալի ծափահարութենէն, յայտագիրի աւարտին սիրայօժար նուագեց երեք յաւելեալ կտորներ:

«Կոմիտաս» Քառեակը Ելոյթի պահուն



Զեռնարկեն ետք, «Կոմիտաս» Քառեակի անդամները եւ սոյն ձեռնարկի յաջողութեան իրենց Ներդրումը բերած անձիք, անմոռանալի պահեր անցուցին հիւրասիրուելով Տեր եւ Տիկ. Վարդգես Մահտեսեաններու բնակարանը, ուր անոնք առիթը ունեցան մօտեն զրուցելու եւ ծանօթանալու իւրաքանչիւր երաժիշտի հետ:

Զեռնարկին յաջորդ օրը, Քառեակը միօրեայ շրջապըտոյտ մը ունեցաւ Կիպրոսի ծովեզերեայ շրջանները եւ յաջորդ առաւտ անոնք մեզմէ բաժնուեցան ամենալաւ յիշատակներով եւ տպաւորութեամբ:

Մեր սրտագին շնորհակալութիւնները կը փափաքինք փոխանցել ձեզի, որ ձեր ներկայութեամբ սատարեցիք եւ քաջալերեցիք մեր գրասենեակին կողմէ կազմակերպուած եւ հայ մշակոյթը անմահացնող գեղարուեստական այս յաջող երեկոն:

Մոլութիւններու Կանխարգիլում (Prevention of Addictions)



Տոքթ. Կիրիակոս Վերեսյես դասախոսութեան պահուն

Չորեքշաբթի, 18 Նոյեմբեր 2009ին, Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահին մԵջ, տեղի ունեցաւ «Մոլութիւններու Կանխարգիլում» նիւթով ձեռնարկ մը, որու հիւր դասախոսն էր մասնագետ ջղաբան-հոգեբան Տոքթ. Կիրիակոս Վերեսյես:

Ձեռնարկը սկսաւ համակարգիչի դրութեամբ նախաբան-ներկայացումով մը, որու միջոցով ներկաները տե-

ղեկացան Կիպրոսի մեջ կատարուած թմրեցուցիչներու գործածութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններու տոկոսային արդիւընթերուն:

Մօտ երկու ժամ տեւող ձեռնարկը շատ յաջող միջոցառում մը նկատուեցաւ, եղած հարցումներու որակին եւ ստացուած հետաքրքրական պատասխան-թելառանքներուն առումով:



Ձեռնարկի աւարտին, Պրև. Սահմեսեան շնորհակալութիւն յայտնելով Տոք. Վերեսյէսին, անոր յանձնեց յուշանուեր մը՝ առ ի գլահատանք իր տրամադրած սիրայօժար ծառայութեան:

Շնորհաւորական գիր

16 Հոկտեմբեր 2009 թուակիր գիրով մը, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորեց Պրև. Գագիկ Ղալազյանը

Յունաստանի եւ Կիպրոսի Արտակարգ եւ Լիազօր դեսպան Նշանակուելուն առիթով, միեւնոյն ժամանակ յոյս յայտնելով, որ այս Նշանակումով աւելի պիտի գօրանան Կիպրահայ Համայնքի Ներկայացուցիչին եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութեան միջեւ սերտ կապերը, ի նպաստ Կիպրահայութեան եւ Կիպրոս-Հայաստան փոխ-յարաբերութիւններու ամրապնդման:

ՊԵՏԱԿԱՆ-ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱԿԱՐԴՎԱԿԻ ԻՎԱՆԴԻՎՈՎԱՆԵՐ

Երեքաբթի, 29 Հոկտեմբեր 2009ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում ունեցաւ Կրթութեան եւ Սշակոյթի Նախարար Դոկտ. Անտրեաս Տիմիթրիովիի եւ Կիպրոսի Պետական Համալսարանի Ռեկտոր Դոկտ. Ստաւրոս Չենիոսի հետ, Ներկայութեամբ Մելգոնեան Կրթական Հաստատութեան Սանուց Միութեան պատրիակութեան մը: Այս հանդիպումին Նախարարը վերահստատեց Կիպրոսի Կառավարութեան ցանկութիւնը՝ հետապնդելու Մելգոնեան Կրթական Հաստատութեան հարցը:



ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒցԻ ՎԱՐԴԳԵՆ ՄԱԿԱՐԴՎԱԿԻ ԻԵՆ

Նոյն օրը, Պրն. Մահտեսեան Երեսփոխանական Գրասենեակին մէջ ընդունեց Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Կիպրոսի Ներկայացուցիչ Տիար Յոայր Ճեալեճեանը եւ հիւրաբար Կիպրոս գտնուող Ֆրանսայի Գիտահետազոտական Կենորոնի գիտաշխատող Դոկտ. Վրի Թոփուզյանեանը եւ իր ազնիւ տիկինը: Տեր եւ Տիկ. Մահտեսեաններ Ներկայ գտնուեցան նաեւ Դոկտ. Թոփուզյան-եանի դասախոսութեան՝ «Հայ Աստուածաշունչին Շահեկանութիւն»ը, որ տեղի ունեցաւ Հոկտեմբեր ամսուայ վերջաւորութեան Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահին մէջ:



Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեանի հետ

Ուրբաթ, 27 Նոյեմբեր 2009ին, ՀՅԴ Բիւրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան, Լիբանանի Խորհրդարանի Երեսփոխան Յակոբ Բագրատունի, Լիբանանի Նախկին Նախարար Ալեք Թապուրեան, ՀՅԴ Կիպրոսի կոմիտեութեան Ներկայացուցիչներ Յակոբ Գազանճեան եւ Վա-

հան Այսեճեան, ընկերակցութեամբ Կիպրահայ Յամայնի Պետական Ներկայացուցիչ Վարդգես Մահտեսեանի, այցելեցին Խորհրդարան եւ մտերմիկ հանդիպում մը ունեցան Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեանի հետ: Այս առիթով, Մարիոս Կարոյեան խոստացաւ յարատել թիկունք հանդիսանալ Յայ Դատի աշխատանքներուն:

Ձեռնարկներու Ներկայութիւն

Կիրակի, 11 Հոկտեմբեր 2009ին, Պրն. Մահտեսեան Ներկայ գտնուեցաւ Լառնագայի Յայ Ակումբին կազմակերպած դասախոսութեան, նիւթ ունենալով Ցիւրիխի մէջ Հոկտեմբեր 10ին ստորագրուած Յայ-թղթական արձանագրութիւնները:

Շաբաթ, 7 Նոյեմբեր 2009ին, Տէր եւ Տիկ. Մահտեսեաններ Ներկայ գտնուեցան Յամազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած Լիբանանի «Կարկաչ» եւ «Այգ» պատանեկան երգչախումբերու Ելոյթին, որ տեղի ունեցաւ Լառնագայի Քաղաքապետարանի սրահին մէջ: Այս ձեռնարկը կը վայելէր Պետական Ներկայացուցիչին հովանաւորութիւնը:

Ուրբաթ, 27 Նոյեմբեր 2009ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը Ներկայ գտնուեցան Կիպրոսի Յայ Դատի Յանձնախումբի կազմակերպած «Տարուայ Յայ Դատի անձնաւորութիւն»ը Միջոցառումին, որ տեղի ունեցաւ Լազարի Քաղաքապետարանի սրահին Ներս, հովանաւորութեամբ Պրն. Վարդգես Մահտեսեանի:

Ուրբաթ, 25 Դեկտեմբեր 2009ին, Պրն. Մահտեսեան եւ տիկինը այցելեցին Լառնագա, ուր անոնք Ներկայ գրտնուեցան Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ անուանակոչութեան արարողութեան:

Ուրբաթ, 25 Դեկտեմբեր 2009ին, Տեր եւ Տիկ. Մահտեսաներ հրաւիրուելով, Ներկայ գտնուեցան Հ.Ե.Ս.ի տարեկան պարահանդեսին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Հիլթըն» պանդոկին մեջ:

Տարեկան այցելութիւն բանտարան

Ուրբաթ, 18 Դեկտեմբեր 2009ին, Պետական Ներկայացուցիչ Վարդգես Մահտեսեան, Տեր Սոմիկ Զհինյ. Յապէշեանի ընկերակցութեամբ, այցելեց բանտարան եւ առիթը ունեցաւ մօտեն տեսակցելու հայ բանտարկեալներուն հետ՝ շնորհաւորելով անոնց Նոր Տարին եւ Ս. Ծնունդը:

Յայ Արուեստի դպրոցի կաղանդի հաւաքոյթ

Ուրբաթ, 18 Դեկտեմբեր 2009ի երեկոյեան, Յայ Արուեստի դպրոցի պարախումբի փոքրիկները, իրենց հեր-





թական փորձին ետք, Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի առթիւ, պատիկ հաւաքոյթ մը ունեցան, հիւրասիրուելով եւ հաճելի վայրկեաններ անցընելով, ներկայութեամբ ծնողներու եւ բարեկամներու:



Ծանօթանակը Կիպրոսի Հանրապետութեան ՕրԵնքներուն

Տնտեսութեան Նախարարութիւն

Յատկացումներու Եւ Նպաստներու բաժանմունք

Նախարարաց Խորհուրդը 14.04.2009ի թիւ 68.644 ո-
րոշումով, հաստատեց նուազ թոշակ ստացողներու պա-
րագան, քննութեան ենթարկելով բարձրացնել անոնց
ստացած գումարը՝ անշուշտ եթէ կը լրացնեն դիմումնա-
գիրին վերջին էջին Վրայ Նշուած պայմանները: Դիմում-
նագիրները Նոյեմբեր 2009ի սկիզբը լոյս տեսան եւ Դեկ-
տեմբեր 2009ին օրենքը ուժի մեջ մտաւ: Ընդգծենք, թէ ա-
մեն թոշակառու յարմար թեկնածու չէ այս նպաստն օգ-
տուելու:

Ստորեւ, հակիրճ ձեւով կը նշենք կարեւոր պայմաննե-
րը, որոնք պետք է ամբողջանան օգտուելու համար այս
յաւելումնեւ.-

- ◆ Թոշակառու անհատ մը, որու տարեկան եկամուտը €10.398ին նուազ է
- ◆ Թոշակառու երկու անհատներ (զոյգ մը), որոնց տա-
րեկան եկամուտը €15.597ին նուազ է
- ◆ Եկամուտի այլ աղբիւրներ չունին, օրինակ՝ ուրիշ
երկու ստացուած թոշակ, այլ գործերէ ամսական, վարձ-
քերէ զանձում կամ եկամուտ՝ պահ դրուած գումարներու
տոկոսնեւն

◆ Նոյն յարկի տակ ապրող երկու թոշակառուներ՝ **մԵկ** դիմումնագիր կ'ամբողջացնեն, իսկ եթէ թոշակառուներէն մԵկը ծերանոց կը գտնուի ապա՝ իրաքանչիրը անհատաբար դիմում կը ներկայացնէ

◆ Դիմում ներկայացնելու ժամկետը Դեկտեմբեր 2009Էն միևնույն ժամկետը 2010 է: Անոնք որ կը փափացին շարունակել օգտուիլ այս նպաստէն 2011ին ալ, անհրաժեշտ է նոր դիմում ներկայացնել 1 Սեպտեմբերէն 30 Նոյեմբեր 2010

Աւելորդ է յիշել, թէ վերոնշեալ յատկացումները կը տրամադրուին պատշաճ դիմումնագիրները ամբողջացնելու պարագային միայն: Յաւելեալ մանրամասնութիւններու համար, հեռաձայնել Տնտեսութեան Նախարարութեան Օժանդակութեանց բաժանմունք՝ հեռ. 22-459911 եւ կամ անձամբ ներկայանալ Քաղաքացիներու Սպասարկութեանց Գրասենեակ (Կέնտրա ԵՀՍՊԵՐԵԴԾՈՒՅՑ տու Պոլիտղ).

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յիւպատոսի այցելութիւն

Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացնուցիչ Պրն. Վարդգես Մահտեսեանի հրաւրով, Յայաստանի Յանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի Դեսպանութեան Յիւպատոսի Տիկ. Լիանա Գրիգորեան Կիպրոս պիտի այցելէ Ուրբաթ, 5 Փետրուար եւ Շաբաթ, 6 Փետրուար 2010ին:

Կիպրոս ժամանակաւոր կամ մշտական բնակութիւն հաստատած Յայաստանի Յանրապետութեան քաղաքացիները, որոնք անցագիրի ժամկետի երկարաձգման, հաշուառման, փոխանակման, կորսուած անցագիրի, անչափահաս երեխաներու արձանագրութիւններու, ինչպէս նաև լիազօրագիր տալու գծով հարցեր ունին, կը խնդրուի անմիջապէս կապ հաստատել Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացնուցիչի Գրասենեակին հետ՝ հեռ. 22-454540 ժամադրութիւն ապահովելու համար:

Երեսփոխանական Գրասենեակ

**Վարդգես Եւ Մակի
Մահտեսեաններ
Ամանորի Եւ Ս. Ծնունդի
զոյգ տօներուն առիթով
սրտանց կը շնորհաւորեն
Կիպրահայութիւնը, մաղթելով
առողջութիւն Եւ երջանկութիւն:**

Թող 2010 թուականը մեր
Մայր Հայրենիքին համար ըլլայ
բարգաւաճումի, յարատել վերելքի
Եւ ազգային հիմնահարցերու բարւոք
լուծումի տարի մը:

ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos
Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42
Ել. Հասցե office@armenianmp.com
Ոստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia
Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42
Ել. Հասցե vmahdessian@parliament.cy